ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20-ը մայիսի, 2024թ.

Կարծիք

Էդգար Սուրենի Արշակյանի «Դիցաստեղծման հիմնախնդիրները Ա. Բլոկի և Ա. Բելու վաղ շրջանի քնարերգության մեջ» թեմայով, ներկայացված Ժ.01.03- «Ռուս գրականություն» մասնագիտությամբ բանասիրական թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Դիցաստեղծումը, որպես մշակույթի կոնստանտ, յուրահատուկ ձևով է դրսևորվում, բազմազան մարմնավորումներ ստանում այս կամ այն դարաշրջանում, տարբեր մշակութային իրավիճակներում: Ռուս գրականության մեջ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարակզբին դիցաստեղծումը ցայտուն և վառ կերպով է դրսևորվել սիմվոլիստների մի շարք գործերում: Ռուսական մշակույթում դիցաստեղծման յուրահատուկ պարադիգմ է ձևավորվում, որը հիմնված է հին և նոր առասպելների հենքի վրա: Է.Արշակյանի ուսումնասիրության մեջ փորձ է արվել քննել ռուս սիմվոլիստների դիցաստեղծման հիմնախնդիրներն և յուրահատկությունները:

Ատենախոսության առարկան են Բլոկի և Բելու վաղ շրջանի ստեղծագործությունների դիցաստեղծ բնույթը բացահայտող բանաստեղծական տեքստերը:

Աշխատանքի գիտական նորույթը: Է. Արշակյանը քննում է մի խնդիր, որը ուրվագծվել, բայց առանձնացված ուսումնասիրությամբ դեռևս չի արծարծվել գրականագիտության մեջ: Բլոկի և Բելու պոեզիայի գրական համընկնումների

որոշակի ասպեկտներ առանձնացվել են, բայց դիցաստեղծման խնդիրները վաղ շրջանի տեքստերում ուսումնասիրության առարկա չեն դարձել: Է.Արշակյանի հետազոտության մեջ առաջին անգամ փորձ է արվել դիտարկել դիցաստեղծման խնդիրները Բլոկի «Բանաստեղծություններ Գեղեցիկ Տիկնոջ մասին» և Բելու «Ոսկին լազուրում» շարքերում, ներկայացնել ընդհանուր միտումները, նմանություններն ու տարբերությունները:

Ատենախոսության մեթոդաբանությունը հիմնված է Մ.Լ. Գասպարովի, Լ.Յա. Գինզբուրգի, Մ.Ի. Դիքմանի, Լ.Կ. Դոլգոպոլովի, Է.Վ. Երմիլովայի, Է.Վ. Իվանովայի, Ա.Վ. Լավրովի, Ա.Ֆ. Լոսևի, Յու.Մ. Լոտմանի, Դ.Մ. Մագոմեդովայի, Դ.Է. Մաքսիմովի, Զ.Գ. Մինցի, Մ.Մ. Պավլովայի, Տ.Յու. Խմելնիցկայայի և այլ գրականագետների տեսությունների վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ իրենց ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 172 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը և հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում /«Мифотворчество в поэзии русского символизма»/, որը ներառում է հինգ ենթագլուխ, քննվում է միթոսի դերը ռուսական սիմվոլիզմի պոետիկայում, դիտարկվում են առասպելների ձևավորման ընդհանուր միտումները և դիցաստեղծման ֆենոմենը ռուսական սիմվոլիզմում:

Երկրորդ գլուխը /«Мифопоэтика «Стихов о Прекрасной Даме» и проблемы мифотворчества А. Блока»/ բաղկացած է երեք ենթագլխից: Այստեղ ուսումնասիրվում են Ա. Բլոկի վաղ շրջանի բանաստեղծությունները, «Բանաստեղծություններ Գեղեցիկ Տիկնոջ մասին» շարքի պատկերավորման համակարգը, դիցաստեղծման խնդիրները:

Երրորդ գլուխը /«Мифопоэтика «Золота в лазури» и проблемы мифотворчества А. Белого»/ կազմված է երեք ենթագլխից, որոնք նվիրված են «Ոսկին լազուրում» շարքի դիցաբանական համակարգի վերլուծությանը, Բելու պոեզիայի դիցաստեղծման խնդիրներին:

Չորրորդ գլուխը /«Мифотворчество в «Стихах о Прекрасной Даме» А. Блока и в «Золоте в лазури» А. Белого: сравнительно-сопоставительный анализ»/ ունի չորս ենթագլուխ: Ատենախոսը առանձնացնում և ուսումնասիրում է Բլոկի և Բելու ստեղծագործական շփումների հիմնական վեկտորները, դիցաստեղծման ընդհանուր սկզբունքներն ու տարբերությունները, առանձնահատկությունները:

Եզրակացություն բաժնում ներկայացված են ատենախոսության հիմնական արդյունքներն և եզրահանգումները:

Առանձնահատուկ ուզում ենք ընդգծել և առժնորել ատենախոսության 4-րդ գլուխը, որն աչքի է ընկնում մանրակրկիտ գրականագիտական վերլուծությամբ: Ատենախոսի կատարած ուսումնասիրությունը հաստատում է նրա հասուն գիտական գործունեություն ծավալելու ունակությունը, կոնկրետ փաստերի, տվյալների ու սկզբնաղբյուրների հետ աշխատելու կարողությունը, մեծածավալ գրականության մանրակրկիտ վերլուծության հմտություններին տիրապետելը:

Ամփոփելով, նշենք, որ Էդգար Արշակյանի ատենախոսությունը լուրջ գիտական ուսումնասիրություն է, որը կարևոր նշանակություն ունի տարբեր բնագավառներում աշխատող գրականագետների համար:

Աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ ներկայացնենք մի քանի դիտարկումներ.

- Ցանկալի կլիներ նշել, որ Թեսևսի և Արիադնայի կերպարներին Բրյուսովի բանաստեղծական անդրադարձներում հիմնականում շեշտադրված է Թեսևսի կերպարը,
- 1.5.1. "«Лабиринтный миф»: В. Брюсов и ранний символизм" ենթագլխում հիմնականում դիտարկվում են Բրուսովի ստեղծագործությունները, ցանկալի

կլիներ եզրակացություններում ավելի մանրամասն ներկայացնել նաև վաղ սիմվոլիզմին առնչվող հարցերը;

- Հետազոտության մեջ կան որոշ տեխնիկական վրիպակներ՝
    - Գրականության ցանկում նշվում է՝ «там же», ինչը չի համապատասխանում գրականության ցանկին ներկայացվող պահանջներին / տես օրինակ՝ 24, 25, 28-31, 65-68, 131, 135, 153 և այլն/, 147-րդ համարի տակ առաջին անգամ հիշատակվող աղբյուրը գրականության ցանկում նույնպես ներկայացվում է «там же»,
    - 23, 61 էջերի հղումներում աղբյուրի հրատարակման տարեթվերը տարբերվում են գրականության ցանկում նշվածներից /[Дешарт, 1974: 98]; [Снессорева, 2003: 425-427], գրականության ցանկում՝ "Дешарт О. Введение // Иванов В. Собрание сочинений в 4 томах. Т.1. Брюссель, 1971, сс.2-227; Снессорева С. Земная жизнь Пресвятой Богородицы и описание святых чудотворных Ее икон. Москва: Терирем, 2013. – 640с."/,
    - 61 էջում Մինցի աշխատությանն արված հղումը գրականության ցանկի մեջ ներառված չէ /[Минц, 1979: 525]/,
    - սեղմագրի անգլերեն ամփոփման մեջ առկա են որոշակի անճշտություններ:

Վերը նշվածն ամենևին չի նվազեցնում Է. Արշակյանի կատարած ուսումնասիրության արժանիքները: Ատենախոսությունը աչքի է ընկնում գիտական հստակությամբ, նորույթի հիմնավորվածությամբ, եզրակացությունների ճշգրտությամբ:

Սեղմագիրը ամբողջովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, և ատենախոս Էդգար Սուրենի Արշակյանը արժանի է Ժ.01.03 «Ռուս

գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Արտասահմանյան գրականության ամբիոնի 2024 թվականի մայիսի 20-ի թիվ 7 նիստում՝ բ.գ.դ, պրոֆեսոր Ռ. Թադևոսյանի, բ.գ.թ., դոցենտ Ի. Սարկիսյանի, բ.գ.թ., դոցենտ Ք.Բեջանյանի, բ.գ.թ., դոցենտ Ա.Ամիրխանյանի, բ.գ.թ., պրոֆ.պ. Ս. Նուրալովայի մասնակցությամբ:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ

բ.գ.դ., պրոֆեսոր ՌՈՒԶԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ռուզան Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ. գ. թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

20-ը մայիսի, 2024թ.